# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ
kotayk@mta.gov.am


08.05.2013թ. N

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

*ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

Ջերմորեն շնորհավորում եմ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ և ցանկանում, որ մեր ժողովրդի տոնած փառահեղ հաղթանակների արդյունքում կերտած խաղաղությունը ընդմիշտ պահպանվի:

Վստահ եմ, որ մեր հաղթանակների գրավականը մեր միասնությունն է, ուստի պետք է նշենք, որ հաղթական քոչարի պարող ազգը միշտ պատրաստ է ցույց տալ թշնամուն իր միասնական բազկի ուժը:

Մայիսյան հաղթանակների կապակցությամբ մեր շնորհավորանքներն ենք հղում Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց ընտանիքներին, Շուշիի ազատագրմանը, ինչպես նաև Արցախյան հերոսամարտին մասնակցած բոլոր հայորդիներին, մաղթելով նրանց անկոտրում կամք, իսկ մեր նահատակ հերոսներին՝ հավերժ փառք:

Կրկին շնորհավորելով այս յուրահատուկ տոնի առթիվ պետք է ասեմ, որ ուժն ու միասնականությունն են ծնում ազգերի հարատևման իրավունքը, իսկ մեր երկրի աշխարհագրական դիրքը մեզ պարտավորեցնում է պատրաստ լինել ցանկացած մարտահրավերի և դաստիարակել այնպիսի սերունդ, որը հարկ եղած դեպքում կգերազանցի իր նախորդին:

Շնորհավորում եմ և խաղաղություն մաղթում մեր երկրին:

*Հարգանքներով*

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ